ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա, հեռ.(ֆաքս)՝ 011 90 00 02

№ 18-344ս/գ-15

«05» 10 2015թ.

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի
<u>նախագահ</u> <u>Արթուր Սաքունցին</u>
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 59

Ձեր 28.09.2015թ. թիվ Ե/2015-28.09/486 գրությունը քննարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

Քննարկման արդյունքներով հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը նախաքննություն է իրականացնում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով, իսկ Ձեր գրությունը որպես հանցագործության մասին հաղորդում ընդունելու և դրա հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշում կայացնելու հիմքերը բացակայում են, քանի որ այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչներին ենթակա, ինչպես նաև հատուկ սուբյեկտների կատարած կոնկրետ հանցագործության մասին փաստեր և տեղեկություններ չի պարունակում:

ՀՀ հատուկ քննչական
ծառայության պետի տեղակալ,
արդարադատության գնդապետ

Վ.Պ.Հովհաննիսյան